

- Միայն հայերեն թարգմանությամբ՝ „De animalibus“ երկը, որ երկխօսութիւն մըն է Ալեքսանդրի հետ, թէ՛ անասուն կենդանիները արդեօք բանականութիւն ունի՞ն:

• Երկու Հայերէն գիրքեր

Մխիթարեան միաբան Հայր Մկրտիչ Աւգերեանի կողմէ գրուած, «*Փիլոնի Եբրայեցոյ մնացորդք ի Հայս*» (հայերէն-գրաբար եւ լատիներէն) երկու երկերը.-

- Բանք երեք ձեւ ի լոյս ընծայեալք: Ա. Բ. Յաղագս Նախախնամութեան եւ Գ. Յաղագս կենդանեաց (Sermones tres hactenus inediti. I et II De providentia, et III De animalibus...), 1822 թ. Վենետիկ:
- Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս: (Ի հին թարգմանութենէ եղելոյ ի Յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց յեղեալ ի լատին բարբառ = Philonis Judaei Paralipomena Armena), 1826 թ. Վենետիկ:

ՓԻԼՈՆԻ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ

Ուսումնասիրութեանս սկիզբը արդէն նշած եմ, որ Փիլոն մեծ ազդեցութիւն ունեցած է հետագայ Քրիստոնէութեան եւ Նոր-Պլատոնական (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան վրայ:

Միջնադարու *Հայրաբանական*⁴² (Patristik) շրջանի *Եկեղեցոյ Հայրերէն* շատեր յիշատակած են Փիլոնի անունն ու գործը եւ բաւական օգտուած են անոր Սբ. Գիրքի Հնգամատեանի այլաբանական մեկնութիւններէն:

Եկեղեցոյ Հայրերէն կարելի է յիշել.-

- **Կղեմէս (Կիւրեղ) Ալեքսանդրացի** (յուն.՝ Klēmēs Alexandreús, 150 – 215 թ.), որ իր կարգին փորձեց քրիստոնէական աստուածաբանութիւնը եւ յունական փիլիսոփայութիւնը համադրել: Եղած է Ալեքսանդրիոյ աստուածաբանական դպրոցի վաստակաւոր ուսուցիչը ապա անոր տնօրէնը: Հեղինակ է բազմաթիւ երկերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են: Հայերու կողմէ ընդունուեցան նաեւ իր դաւանաբանական բանաձեւերէն շատերը:

42 **Հայրաբանական շրջան** (Patristics Era), 2-րդ մինչեւ 8-րդ դար.-

Բառը կազմուած է յունարէն patēr կամ լատիներէն pater = հայր եզրոյթէն: Այս շրջանը կը սկսի Հին Դարու վերջաւորութեան, Յիսուսի առաքեալներէն անմիջապէս ետք: Այս ժամանակաշրջանին «*Եկեղեցոյ Հայրերը*» (տե՛ս Էջ 11-ի ծանօթագրութիւնը) կը կազմակերպէին Քրիստոնէական ընդհանրական եկեղեցին ու կը հաստատէին Քրիստոնէական ուսմունքը, ինչպէս նաեւ կը պաշտպանէին ու կը տարածէին այս Նոր կրօնը:

Հայրաբանական շրջանէն ետք, 9-րդ դարուն, կը սկսի Միջնադարեան **Դպրական** (Scholastic) **շրջանը**, որ կը շարունակուի յաջորդող 6 դարերու ընթացքին, մինչեւ 15-րդ դար: